ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 92

«03» 11 2022թ. քաղ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Վալիկոյի Էլիզբարյանին ՀՀ զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու և Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազի պարտականությունների կատարումը նույն կայազորի զինվորական դատախազի տեղակալ Գևորգ Խաչատուրի Խալթյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 1-ի՝ համապատասխանաբար N 402-Ա և N 407-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Գ.Էլիզբարյանի կողմից՝ Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Գ.Խալաթյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Պողոսյան Արթուր - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Էլիզբարյան Ռազմիկ - Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության դատախազ,

Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Մարգարյան Մելանյա -	Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի նոյեմբերի 14-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ